



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

18 հուլիսի 2022 թվական N 468-Ա

ԱՐԹՈՒՐ ՕՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Արթուր Օնիկի Վարդանյանի 2022 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Մեծամոր գյուղում գտնվող Արթուր Օնիկի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող /04-064-0222-0127/ ծածկագրով արտադրական նշանակության հողատարածքում ինքնակամ կառուցված 2315.6 քմ արտաքին մակերեսով արտադրական շինությունները՝ համաձայն «Արամ Աջաբխանյան» Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2022P5X31E :
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է արտադրական շինության 1քմ-ի համար 1813.5 ՀՀ դրամ, $1813.5 \times 2315.6 \text{քմ} = 4199341$ /չորս միլիոն մեկ հարյուր իննսունինը հազար երեք հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ:

3. Ինքնական կառուցված շենք-շինությունների օրինականացման հաշվարկված վճարը՝ 4199341 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Մեծամոր գյուղի N900325180157 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

5. Սույն որոշումից բխող գույքային ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araq.s.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

18 հուլիսի 2022 թվական N 469-Ա

ԱՐՏԱՇԵՍ ՎԱՐԴԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՍ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Ջրարբի գյուղի բնակիչ Արտաշես Վարդանի Հովսեփյանի 2022 թվականի հուլիսի 15-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ջրարբի գյուղի բնակիչ Արտաշես Վարդանի Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող /04-086-0001-0016/ ծածկագրով տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված 152,2 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը՝ համաձայն <<Ավագ Ավագյան>> Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը՝ 2022CQFBUS:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը կազմում է օժանդակ շինությունների 1քմ համար 1209 ՀՀ դրամ.

1209* 152,2քմ = 184010 /մեկ հարյուր ութսունչորս հազար տաս/ ՀՀ դրամ:

3. Ինքնակամ կառուցված շենք-շինության օրինականացման համար հաշվարկված վճարը՝ 184010 ՀՀ դրամ գումարը պետք է վճարվի Զրարքի գյուղի N 900325183169 հաշվեհամարին:

4. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրվա ընթացքում օրինականացման համար սահմանված վճարը չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5. Սույն որոշումից բխող գույքային ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqshamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2022 թվական N 470-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Ձ Ալեքսան Լալայանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Ալեքսան Լալայանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2022 թվական N 471-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՄ ՇՏԱՔԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ-ի հունվարի 22-ի « Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին» թիվ 46-Ն որոշման 6-րդ կետի «բ» ենթակետի և 18-րդ կետի դրույթները, համաձայն «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլանի 8.2.1 կետի

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքում 2022թ-ի հուլիսի 22-ին անցկացնել «Ապարանի ջրամբարի վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն:
2. Հաստատել շտաբային ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել շտաբային ուսումնավարժության օրացույցային պլանը՝ համաձայն հավելված 2-ի:
4. Ուսումնավարժությանը ներգրավել՝
 - 1) Արմավիրի մարզի Արաքս համայնքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովը.
 - 2) Արմավիրի մարզի Արաքս համայնքի տարահանման հանձնաժողովը.
 - 3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությունը.
 - 4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբայեղով, Հայկաշեն, Մեծամոր, Զրառատ բնակավայրերի ղեկավարներին:

6. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Վահրամ Հարությունյան

- 1) կազմակերպել ուսումնավարժության պլանավորող փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի:
- 2) կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը համաձայն ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի:
- 3) ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել հուլիսի 20-ին:
- 4) ուսումնավարժության անցկացումից հետո 5-օրյա ժամկետում ներկայացնել ուսումնավարժության անցկացման մասին ամփոփագիրը:

7. Ուսումնականության մասնակիցներին՝

- 1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել <<< Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության> և <<< Արմավիրի մարզի բնակչության տարահանման> պլանները:
- 2) ուսումնավարժության ընթացքում իրականացված միջոցառումների մասին ներկայացնել համապատասխան գեկույցներ:

8. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:



ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

Դ. ՆԱԶԱՐՅԱՆ

2022թվականի հուլիսի 18
Արաբս համայնք



ԿԱԶՄ

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՇՏԱՔԱՅԻՆ
ՌԻՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԴԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Ղազար Ղազարյան	Արաքս համայնքի ղեկավար՝ ուսումնավարժության ղեկավար
2	Համայնքի ղեկավարի 2-րդ տեղակալ Պետրոս Ավագյան	համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ՝ ուսումնավարժության ղեկավարի տեղակալ
3	Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Վահրամ Հարությունյան	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

Արմավիրի մարզի Արաքս համայնքի

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝

Վարսենիկ Վարդանյան

Հավելված N 2
Արաքս համայնքի ղեկավարի
2022թ-ի հուլիսի 18-ի
N 471-Ա որոշման



ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Արմավիրի մարզի Արաքս համայնքում 2022 թվականի հուլիսի
22-ին անցկացվելիք շտաբային
ուսումնավարության նախապատրաստման

Հ/հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Պատասխանատու, կատարողներ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
2	Մտահղացման բացատրագրի մշակում	մինչև 14.07	Ղեկավարման շտաբ	
3	ՇՈՒ անցկացման պլանի մշակում	մինչև 15.07	Ղեկավարման շտաբ	
4	Ուսումնավարության փաստա- թղթերի հաստատում	մինչև 19.07	Ղեկավարման շտաբ	
Ուսուցանվողների նախապատրաստումը				
5	ՇՈւ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի հետ ծանոթացում	մինչև 20.07	Ղեկավարման շտաբ	
6	Փոխհամագործակցության պլանների և ԱԻ ոլորտին առնչվող իրավական ակտերի ուսումնասիրում	մինչև 20.07	Ղեկավարման շտաբ	
7	Ծառայությունների գործառույթների ճշտում	մինչև 21.07	Ղեկավարման շտաբ	

Արմավիրի մարզի Արաքս համայնքի

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝

Վարսենիկ Վարդանյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2022 թվական N 472-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Ձ Քնարիկ Մուրադյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Քնարիկ Մուրադյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqshamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2022 թվականի N 473-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետը և Ա/Ձ էմմա Կիրակոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ էմմա Կիրակոսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնք Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներին կազմակերպել և իրացնել հանրային սնունդ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2022 թվական N 474-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Ձ Հասմիկ Աղաջանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Հասմիկ Աղաջանյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գրիբոյեդով գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ եռամսյակին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Դ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, hbn.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2022 թվականի N 475-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Ձ Ժորա Հայրապետյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Ժորա Հայրապետյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հուլիսի 2022 թվական N 476-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և Ա/Ձ Քրիստինե Մաթևոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլատրել Ա/Ձ Քրիստինե Մաթևոսյանին Արմավիրի մարզի Արաքս համայնքի Խորոնք գյուղի վարչական տարածքում 2022 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներին վաճառել ոգելից խմիչքներ և ծխախոտային արտադրատեսակներ:
2. Սահմանել տեղական տուրք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի վարչական տարածքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» N 10-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

18 հուլիսի 2022 թվականի N 477-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2022 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 10:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-9/ թափուր պաշտոնի մրցույթ:
2. 2022 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 12:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-10/ թափուր պաշտոնի մրցույթ:

3. 2022 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 14:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-1/ թափուր պաշտոնի մրցույթ:
4. 2022 թվականի օգոստոսի 18-ին՝ ժամը 16:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-2/ թափուր պաշտոնի մրցույթ:
5. 2022 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 10:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-5/ թափուր պաշտոնի մրցույթ:
6. 2022 թվականի օգոստոսի 19-ին՝ ժամը 12:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության ,անձնակազմի կառավարման,տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-6/ թափուր պաշտոնի մրցույթ:
7. Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի պահանջներով:
8. Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիսի 18

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա.Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

19 հուլիս 2022 թվականի N 478-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական տարածքում գտնվող 04-017-0023-0012 ծածկագրով տնամերձ հողամասին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Արաքս, Հ. Թումանյան 24 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2022 թվականի հուլիս 19

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2022 թվական N 479-Ա

«ԱՐԱՔՍԻ ԱՎԱԶԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս և Ջրառատ բնակավայրերի սահմանագծում համայնքապատկան այլ գյուղատնտեսական հողատեսքեր 04-017-0103-0003 ծածկագրով հողը «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի կողմից ինքնակամ զավթելու, դրա վրա ապօրինի արտադրական գործունեություն իրականացնելու համար, այն է՝ հողամասի վրա ավագի լվացման կայանի տեղադրում, ավագի կուտակում, լվացում և տեսակավորում, **պարզեց հետևյալը.**

«Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի կողմից /հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ Հայկաշեն, գրանցման համար՝ 56.110.00404, գրանցման ամսաթիվ՝ 05.06.1996թ., ՀՎՀՀ 05004308/, որի տնօրենն է հանդիսանում ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Հայկաշեն գյուղի բնակիչ Գագիկ Ավդալյանը /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, Հայկաշեն գյուղ, 5-րդ փողոց, 25 տուն/, միակ բաժնետերը՝ Գրիգոր Հենրիկի Պետրոսյան /հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակ թաղամաս, 14շ., 14 բն./, թույլ է տրվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության, 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունների, ինչպես նաև 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումներ:

Վերը նշվածի կապակցությամբ Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 2-ի հանձնարարականով Համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության, 154-րդ հոդվածի 3-րդ մասի և 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման փաստով:

«Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի բաժնետեր Գրիգոր Հենրիկի Պետրոսյանը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին և ներկայացել էր վարչական վարույթի լսմանը, ով քննարկման ժամանակ հայտնեց ընկերության սնանկ ճանաչվելու փաստի, ինչպես նաև կասեցված գործունեությունը մասնակի՝ 3 (երեք) ամիս ժամկետով վերսկսելու՝ ՀՀ սնանկության դատարանի որոշումների վերաբերյալ:

Այնուհետև վարչական վարույթի մասին ծանուցվել են նաև «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Ավդալյանը և «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանը, առաջարկությամբ՝ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ հավելյալ լսումներ անցկացնելու պահանջի դեպքում, ծանուցագիրը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում, համապատասխան դիմում ներկայացնել: Սակայն նրանց կողմից որևիցե դիմում չի ներկայացվել:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական ղեկավարի 2022 թվականի հունիսի 1-ի N 50 գրությամբ տրված տեղեկատվությունը:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 2-ի հանձնարարականը՝ վարչական վարույթ հարուցելու մասին:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 2-ի հանձնարարականը՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 24-ի N 30-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովին:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 24-ի N 30-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 3-ի N 2 արձանագրությունը և կից լուսանկարները:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 3-ի N 716 գրությունն ուղղված «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի բաժնետեր Գրիգոր Հենրիկի Պետրոսյանին: /Հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2022 թվականի հունիսի 6-ի տրված ստացականը/:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 16-ի N 805 գրությունն ուղղված «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Ավդալյանին և «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանին: /Հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2022 թվականի հունիսի 17-ի տրված ստացականները/:

N ԵԿԴ/0096/04/16 սնանկության գործի շրջանակներում 07.07.2022թ. Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի /դատավոր՝ Ա.Աթաբեկյան/ վճիռը՝ «Արաքսի Ավազան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

սնանկության գործն ավարտելու և ընկերությանը ֆինանսապես առողջացած համարելու մասին: /Հիմք և աղբյուր՝ www.datalex.am դատական տեղեկատվական համակարգ/:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատարի 2022 թվականի հունիսի 18-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս և Ջրառատ բնակավայրերի սահմանագծում համայնքապետական այլ գյուղատնտեսական հողատեսքեր 04-017-0103-0003 ծածկագրով հողը «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի կողմից ինքնակամ զավթել է, դրա վրա ապօրինի արտադրական գործունեություն է իրականացվում, այն է՝ հողամասի վրա ավազի լվացման կայան է տեղադրված, ավազի կուտակում, լվացում և տեսակավորում է կատարվում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2022 թվականի հունիսի 2-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով, Արաքսի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի հունիսի 13-ին անցկացվել է լսումներ, որին մասնակցելու նպատակով «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի բաժնետեր Գրիգոր Հենրիկի Պետրոսյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, որին և ներկայացել էր: Նա քննարկման ժամանակ հայտնեց ընկերության սնանկ ճանաչվելու փաստի, ինչպես նաև կասեցված գործունեությունը մասնակի՝ 3 (երեք) ամիս ժամկետով վերսկսելու՝ ՀՀ սնանկության դատարանի որոշումների վերաբերյալ: /Հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2022 թվականի հունիսի 6-ի տրված ստացականը/:

Այնուհետև հարուցված վարչական վարույթի մասին ծանուցվել են նաև «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Ավդալյանը և «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Վարազդատ Ասատրյանը, առաջարկությամբ՝ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ հավելյալ լսումներ անցկացնելու պահանջի դեպքում, ծանուցագիրը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում, համապատասխան դիմում ներկայացնել: Սակայն նրանց կողմից որևիցե դիմում չի ներկայացվել: /Հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2022 թվականի հունիսի 17-ի տրված ստացականները/:

N ԵԿԴ/0096/04/16 սնանկության գործի շրջանակներում 07.07.2022թ. Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանը, դատավոր՝ Ա.Աթաբեկյան, վճռել է «Արաքսի Ավազան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործն ավարտել և ընկերությանը համարել ֆինանսապես առողջացած:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատարի կողմից գեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող «Արաքսի Ավազան» ՍՊ ընկերությանը ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի, հազարհինգհարյուրապատիկի, հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 1.750 000 /մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Նախագգուշացնել իրավախախտող «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ին, որ համայնքի ղեկավարի որոշմամբ տույժ նշանակվելուց հետո իրավախախտումը շարունակելու, հետևանքները չվերացնելու, հողամասը նախնական դիրքի չբերելու դեպքում Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կնշանակվի տուգանք, սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկից երկուհազարհինգհարյուրապատիկի չափով:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, կանխարգելում ու կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված

օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հոդերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ պարբերության՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Տվյալ պարագայում «Արաքսի Ավազան» ՍՊԸ-ի կողմից ինքնակամ զավթել է համայնքապատկան այլ գյուղատնտեսական հողատեսքեր ունեցող 04-017-0103-0003 ծածկագրով հողը, որի վրա ապօրինի արտադրական գործունեություն է իրականացվում, այն է՝ հողամասի վրա ավազի լվացման կայանի տեղադրում, ավազի կուտակում, լվացում և տեսակավորում:

Արդյունքում տեղի է ունեցել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության խախտում, այն է գյուղական համայնքներում պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը և դրա հետևանքները չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով, ինչպես նաև 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված խախտումներ, այն է՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված արարքներից որևէ մեկը պետությանը, համայնքներին, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց

